ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

<<ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ>> ՓԲԸ 18.03.2016թ. ԹԻՎ 170-Ա ՀՐԱՄԱՆՈՎ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

<<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ
(ք. Երևան 0042, Ի. Գասպարյան 33)

22 մարտի 2016թ.,
ժամը 16:30

Մասնակցում էին.

<u>Հանձնաժողովի նախագահ՝</u>

Գ.Սիմոնյան ՏԱ տնօրեն

<u>Հանձնաժողովի անդամներ՝</u>

Ա.Ալավերդյան ՆԾ պետ

Ա.Կարախանյան ՆԾ ԱՆԿ ղեկավար

ՆԾ ինժեներ Ա.Մաջարյանը հիվանդության պատճառով նիստին չէր մասնակցում

Օրակարգ՝

1. << ՀԱՆ-ԲԸԱՀԱՊՁԲ-16/24>> ծածկագրով Ընկերության կարիքների համար <<DVOR/DME>> նավիգացիոն սարքավորման գնման ընթացակարգին ներկայացված գնային առաջարկի գնահատում

Հրապարակվեց գնային առաջարկ ներկայացրած մասնակցի անունը՝ <<Ստեփանակերտ>> օդանավակայան ՓԲԸ, էլ.հասցե airportstepanakert@mail.ru: Գնային առաջարկը ներկայացվել է էլեկտրոնային տարբերակով:

Հանձնաժողովի նախագահը նշեց, որ ընթացակարգի միակ մասնակիցը գնային առաջարկը ներկայացրել է սահմանված ժամկետից շուտ, բայց քանի որ սույն գնման ընթացակարգը կազմակերպվել է <<Գնումների մասին>> ՀՀ 20-րդ հոդվածի 5-րդ մասի 5-րդ կետի հիման վրա, նպատակահարմար է հայտերի բացման և գնահատման նիստն անցկացնել սահմանված ժամկետից շուտ:

Այնուհետև նախագահը հրապարակեց գնման առարկայի նախահաշվային գինը.

Չափա-բաժինների համարները	Ապրանքի անվանումը	ԳԻՆԸ ՀՀ դրամ
1	DVOR/DME նավիգացիոն սարքավորում	100 000 000

Հայտարարվեց <<Ստեփանակերտ>> օդանավակայան ՓԲԸ գնային առաջարկը. 100 000 000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն:

Հանձնաժողովը քննարկման արդյունքում ***միաձայն որոշեց.***

1. <<ՀԱՆ-ԲԸԱՀԱՊՁԲ-16/24>> ծածկագրով Ընկերության կարիքների համար <<DVOR/DME>> նավիգացիոն սարքավորման գնման

ընթացակարգի հաղթող ճանաչել <<Ստեփանակերտ>> օդանավակայան ՓԲԸ-ին,

2. Օրենքով սահմանված կարգով սույն որոշման մասին տեղեկացնել շահագրգիռ անձանց:

Գ.Սիմոնյան	Հանձնաժողովի նախագահ
Ա.Ալավերդյան	Հանձնաժողովի անդամ
Ա.Կարախանյան	Հանձնաժողովի անդամ
Գ. Սարգսյան	Հանձնաժողովի քարտուղար